

3869

281.6

Z-24

2010

B 2001



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՍՏ

ՊԵՏՐՈՍ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐ

Ի Օ Ս Կ

Տ Գ Ե Ա Լ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի Տ Գ Ե Ա Ն Ի

ՆՈՅՆԵՆ ԵՂԵԿԵՒՈՑ

— 1853 —



1777

—

THE

BOOK

OF

THE

OF

OF

—

281.6  
2-24 *uv*

70

65-12002  
588/14  
1010 2002 (0101)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆՑ

ՔԱՐԴԱՊԱՅՔ ԵՐԷ

ԽՕՊՔ



~~№ 538 Դ.~~

№ 26 Զ Կ

№ 540 Կ

Տ Գ Ե Ա Լ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի Տ Գ Ա Ր Ա Ն Ի

ՆՈՅՆԸՆ ԵՂԵԲՆՈՅ

— 1853 —

36664 u. h.

W

REVUE DE LA

REVUE DE LA

REVUE DE LA

02-15005

28811  
010

1881

1881

1881

1881

REVUE DE LA

1881

REVUE DE LA

1881





Նոյեան Աղանւոյ 59 , 53 , 54 և 55 թերթերուն  
մէջ հրատարակուած Հայտարարութեան  
ըստ խնդրոյ արժանապատիւ հեղինակին և սյուր  
աղղախորաց զատ տեարակով ալ տպելնուս նպա-  
տակը՝ նախ խափանել է այն խօսքը թէ Հայոց  
աշխարհականները միայն կը խօսին Մխիթարեան  
պարսաւազրբին գէմ և հոգևորականները լուռ կը  
կենան : Երկրորդ՝ աւելի ընդարձակ կերպիւ ցու-  
ցընել թէ աշխարհիս թան կողմանց հայերը միևնոյն  
դժացմունքով կարգացեր են յիշեալ տետրին դատա-  
պարտելի խօսքերը : Հայտարարութեան վարդապետի ճշ  
խօսք  
այս անգամ աւելի ուշադրութեամբ տպուեցաւ .  
և Նոյեան Աղանւոյ մէջ հրատարակուածէն դուրս  
մնացած հատուածներն ալ տեարակիս մէջ ամբողջ  
դրուեցաւ :

# ՎԱՅՄԱՏԱՆԻ ԱՅԾ

Ա Ա Բ Գ Դ Ե Յ Ը

Մ Ը

Խ Օ Ս Ք

Խ պատասխանի՝ Գուլենցոյ պարտաւար-  
քիւն դէ՛ Սիլիւսեանց հանաժ պեպ-  
րակին Ժանի ճը հաստատոյ, որ յՅՕԸԷ  
Ըի- շաքանադրին Մոյեան Լըսանոյ :

Ա

զգասէր՝ մը՝ իր համազգի եղբօր  
միասիրտ աշխատութիւն տեսնելով  
ազգին լուսաւորութեւն և միաբանական սիրոյն  
համար ՚ի գրաւորականս, ու անոր դարձի  
խոստմունքները վերստին իւր հայրենի ա-  
ւանդութեանց վրայ, ուստի խորդացած՝ էր  
ամբողջ դարուկէսէն վեր, անոր մանր սը-  
խալանաց ու յանցանաց վրայ, որ առ հայ-  
րենիս՝ աչքը կը գոցէ, և իբրու չտեսնող

կ'ըլլայ, սպասելով, որ անոր անկեղծ սրբ-  
տիւ դարձման ճառագայթովը, որ կը յու-  
սացուէր շուտ ժամանակի, ան փոքրիկ ու  
աչքի չերեցած յանցանաց մռայլն ալ կը  
փարատի անշուշտ, որ երբեմն երբեմն ա-  
չաց առջև կ'ելէին 'ի հաւատոյսն :

Այսպէս էր մեր, ու մեր համազգի եղ-  
բարց Մխիթարեան ուխտին մէջ յընթա-  
ցըս ներկայ իննւտասներորդ դարուս, որ  
խորդացած իրենց հայրենի հաւատոց և ազ-  
գային եկեղեցւոյ աւանդութեանց, երբ որ  
Աւրոպայի լուսաւորութեան ճառագայթ-  
ները “Ադրիական ծովածոցին” եղբրքը  
իրենց թափառականութեան օրօրոցին մէջ  
իրենց դլխուն ալ զարկեց, անգամ մը աչ-  
քերնին դարձուցին իրենց վրայ, տեսան  
որ, դեռ արհամարհելի բաժանման խա-  
ւարին մէջն են, որոյ անդունդներուն ա-  
փունքը ոչ ազգասիրութեան եռանդ՝ և ոչ  
հայրենեաց սիրոյ փափաքը կը մերձենան.  
կարծես թէ Մեծատանը տեսած անհնա-  
րին վիճը բացուած իրենց ու հայր Աբրա-  
համու մէջ :

Բայց երբէք անհնարին բան կայ ար-  
դեօք, որ աշխատութեամբ հնարաւոր չըլ-  
լայ, և դժուարինք չդիւրանան. այսպէս ևս  
Մխիթարեանք երբ ազգասէրներէն իրենց  
ազգատեցութեանը մէջ զտնուեցան, տե-

սան ևս , որ իրենց կողմնական ժողովրդոց  
աչքը բացուելով , ու ազգասիրութեան ե-  
ռանդը մէջերնին բորբոքուելով , անոնցմէ  
ևս ատելութեան փոխադարձներ կընդունին .  
դարձան իրենց բռնած ճանապարհէն , կամ  
թէ ազգատեցութեան ոգիէն . ու անգամ  
մը աղգի ընդհանրութեան վրայ սէր ձգե-  
ցին , ուսկից բաժնուած էին , թէ ոչ իսկա-  
պէս , գոնէ ազգասիրաց երևակայութիւնը  
խարելով :

Եւ ըստորում մերձաւորը մարդուս բա-  
նիւ և գործքով ըրածը միանգամայն կը տես-  
նէ . քան զհեռաւորը որ մէկուն միայն գործքը  
տեսնելով զանիկայ կը կշռէ , անոր ի՞նչ  
հոգւոյ տէր ըլլալը չգիտնալով , մենք ևս  
աս յետքի տարիներնուս մէջ՝ Մխիթարեանց  
ինչ հոգւոյ տէր ըլլալը չգիտցած , անոնց  
գրաւոր գործքը հեռուէն կարդալով (որոնք  
բոլորովին ազգասէր կտրած էին) ոչ միայն  
խարուած , այլ հաւատ ևս ընծայած էինք  
իրենց ազգասիրութեանը , ինչպէս պիտի  
խօսինք իրենց գրուածոց դէմ . ուստի աչք  
չդարձուցինք այլ ևս տեսնելու անոնց բռ-  
նած զարտուղի ճանապարհները , անոնց  
բիւրատեսակ ատելութեանց ցոյցերը . ա-  
նոնց հաւատքի կողմանէ , ինչպէս իրենք կը-  
սեն , « տարածայնութիւնները , հակառակու-  
թիւնները , անոնց որսական , նենգուպատիր



ու ազգի միութիւնը շփոթող որոգայթնե-  
րը : և որ մեծն է , անոնց ու անոնց նման  
չար մշակաց՝ Հայաստանեայց սուրբ և ուղ-  
ղափառ Ակեղեցւոյ հաւատոց մէջ ցանած  
որոմները , որովք որքան որ ազգը կը ջա-  
նային իրենց քաշել , այնքան ևս իրենց լա-  
րած որոգայթին մէջ իրենք կ'ընկնէին .  
“ Աւ որոգայթ զոր թագուցին՝ առցէ զոտս  
նոցա ” :

Ահա այս ամեն անոնց արարքը՝ վերջին  
տարիներուս իրենց ազգասիրական խոստ-  
մանց հետ բաղդատելով , անցած գնացած  
տարիներու ստուերաց մէջ ծածկեցինք , ա-  
նոնց զամենքն ալ ժամանակի կուրութեան  
պտուղ սեպելով , և ճշմարիտ եղբայրսի-  
րութեամբ ու սրտացաւութեամբ անոնց  
մեզմէ հերձուածոց վրայ , զայն ամենայն  
մտքերնուս մէջէն արմատախիլ առնելով՝  
մոռացութեան անդունդը ձգեցինք , և ոչ  
թէ այսչափ միայն , այլև յԱստուծոյ ևս  
ուխտիւք կը խնդրէինք , որ մեր ազգի մի-  
ութիւնը վերստին ամբողջացընելու համար ,  
առ ՚ի “ Ե ինեւ զերեարս քստ առաքելոյն ,  
մեզմէ բաժնուած համազգի եղբարցդ ճշմա-  
րիտ դարձ տայ վերստին մեր ազգութեան  
կեդրոնին վրայ , իրենց հայրենեաց աւերակ-  
ներուն վրայ , որոց պակասութենէն՝ դեր-  
բուկներու բուերը այցելու կ'ըլլան անոնց

նախնեաց հողին և ոսկերացն իսկ : Խնդրեցինք ուխտիք , որ մեր համազգի եղբարց ազգասիրութեան թէ ոչ կեղակարծ՝ խոստմունքները յերևան հանէ , ու արդիւնքը վայելել տայ ազգիս , զորոնք իրենց գրուածքներէն կը հաւաստէինք :

Եւ այց ինչ սրտով և մինչև ցե՛րբ աս խօսքերս զրուցենք ու ինչպէս յատուծոյ խնդրենք որ Մխիթարեան վարդապետաց իրօք կեղակարծ ազգասիրութեան պտուղը տեսնենք , երբ մեր կողմէն ազգասիրութիւն , իրենց կողմէն ազգատեցութիւն կը տեսնենք , մեզմէ իրենց պահանջելիքը՝ իրենցմէ չպահել . ազգասիրութիւն չըլլար , երբոր մէկու մը ազգասիրական խօսքը՝ գործքին չհամաձայնիր . ուստի երբոր չի համաձայնիր՝ խարէութիւն կ'ըլլայ . խարէութիւնն ալ վարդապետի գործք չէ . Քրիստոսի աշակերտին չէ տրուած խարերայ ըլլալ , թէ որ Քրիստոսի աշակերտ են , ինչպէս որ վարդապետ կ'ըսուին , իրենք ուստի՞ց առին այդ խարէութեան պատուէրը . Քրիստոս խարէութիւն ընելու պատուէր չի տուաւ , « Եւ եղիցին ձեր այո՛ն՝ այո՛ , և ոչն՝ ոչ » : — Օ՛րի սուտն՝ ՚ի Հօրէ սատանայէ է — . իսկ թէ Մխիթարեանց այո՛ն այո՛ չէ , ուրեմն ՚ի Հօրէ սատանայէ են : Իսկ թէ որ իրենց մէկ գործը զմէկալը կը ստէ , ան ատեն մարդկու-

Թենէ դուրս կը ճանաչեմք զիրենք . վասն զի երկու հակասականք մէկ են թակայի մէջ . չեն կրնար ըլլալ . Թէ որ ըլլան, հարկաւ մին զմիւսն կը հերքէ . Ճշմարիտ քրիստոնէին Թէ որ պէտք է ներքինը արտաքին դործոց համաձայնի , որ ճշմարիտ քրիստոնեայ ըլլայ . ապա ուրեմն աւելի քրիստոնէից վարդապետաց , ևս առաւել՝ ուսումնական վարդապետաց , և առաւելագոյն՝ Վրիստոսի աշակերտաց :

Իսկ Սիսիթարեան վարդապետաց խօսքը գործքին չի համաձայնիր , և մի գործքը՝ զմէկալք կը հերքէ . ինչպէս պիտի տեսնենք իրենց Բաղձավէպներուն ու իրենց նոր ապաճ Գօլէճցւոց դէմ տեսրակին մէջ . ուրեմն աս ձեռնարկութեանս եղբակացու թիւնն ևս զիրենք կը բռնադատենք տալու . այսինքն՝ ոչ քրիստոնեայք են , ոչ քրիստոնէի վարդապետք , և ոչ ևս Վրիստոսի աշակերտք : Մեր բերանը չի զօրէր աս ըսելու . իրենցը . . . իրենցը կը զօրէ “ գոհութիւն Լստուծոյ , ինչ հերետիկոս ալ են նէ հէլէ հայ չեն եղեր : ”

Վրիստոսի եկեղեցին խաբէութիւն չի սորվեցներ , միթէ կրնան ըսել , Թէ՛ շրջապատայ եկեղեցին կը սորվեցընէ . եթէ ըսեն , մենք ևս ուրախ ենք , որ շրջապատայ եկեղեցին Վրիստոսի եկեղեցիէն արտաքոյ

կըմնայ, որ միշտ կը ջանայ ուղղափառութեան  
կիտին վրայ ինքզինքը ծնած քարողել :

Մեր Սուրբ Ամբրոնացին զմեզ կը նա-  
խատէ Ատինացեաց (յունաց) հետ սէր չու-  
նենալնուս, անմիաբանասէր ըլլալնուս հա-  
մար. միթէ զՄիսիթարեանները կ'արդարա-  
ցընէ՞ ազգայնոցս հետ խաբէուի ընելնուն  
համար. թէ որ նա Քրիստոսի ճշմարիտ  
սէրը առ եղբայրն պահանջելուն համար, կը  
դովեն զինքը, ինչպէս որ գովելի է, ու ա-  
նոր արդիւնաւոր սիրոյ բառերովը իրենք լոկ  
առմամբ, մեզմէ սէր կը պահանջեն, մենք  
իրենց խաբէութեան տպած ու անտիպ գործ-  
քերովը իրենցմէ ի՞նչ պիտի պահանջեմք .  
յայտ է թէ, սատանայի որդիութենէ հը-  
րաժարիլ, և ի՞նչ պիտի զիրենք կոչեմք ի-  
րենց խաբէութեանը համար, յայտ է թէ,  
սատանայի որդի. « Սուտն 'ի օրէ սա-  
տանայէ է » :

Մէկ ալ որ, թէ իրենց ազգասիրա-  
կան յօդուածոց բառերի տակ այս խաբէ-  
ութեան թոյնը մթերած էին, ու ասորուն  
օրս դուրս ժայթքելով, փոխանակ ազգը  
թունաւորելու, իրենց Ռազմավէպը թու-  
նաւորեցին, ու նոր տիտղոսով մը 'ի Ռազ-  
մավէպ անուն պսակեցին. հապա Ս. Ամբր-  
ոնեցեոյ արդիւնաւոր բառերովը ի՞նչ վէրք  
պիտի չի բանային դարձեալ մեր սուրբ հա-



ւատոյ միութեան մարմնոյ մէջ . յայտ է թէ մեր ուղղափառութեան զէնքերը , զորոնք Վրիստոսի սիրոյն խաւիանողաց դէմ կը գործածեմք , ան ատենը՝ եթէ հաւատայինք իրենց ազգասիրական հողմալից բառերուն՝ մեր ձեռքէն պիտի առնէին , ու խաբէութեան զէնքի դարձուցած՝ մեզի հետ 'ի հաւատոյսըն պիտի պատերապմէին , ինչպէս եղած է արդէն իրենց կաթողիկոսութեան քանի մը դասերուն մէջ 'ի Կօստանդնուպօլիս :

Վասն զի՝ ինչպէս կ'ըսէ մեր ազգային օրագրաց մէկն ևս (Սասիս 30 թիւ) Մըխիթարեան ու Քօլէճցի վարդապետները « իրենց աշխատութեամբ Հայոց ազգէն ժողոված քիչ մը կողոպուտը քսան տարիէ 'ի վեր մէջերնին չը կրնալով բաժնել , ամեն անարժան միջոց և եկեղեցականութեան անվայել զէնքեր ձեռվընին առած՝ կատաղաբար մէկմէկու հետ կը մաքառին » : Այս զէնքերն են՝ « դայթակղելի կռիւներ (իրենց մէջ եղած) , չարախօսութիւններ , թըշնամանքներ , ստութիւններ » : Այդ զէնքերը վերցընողներն ալ ազգասիրութեան դէմ իրենցմէ վկայած՝ « սուտ , կեղծաւոր , հացկատակ , անարգ մարդ , զեղխ , կռուող , խաբող , ընտանիքը հոգացող , սուտը իրաւէն չը զատող » : (Շրդ. հատոր Բազմավրէպն եր . 133) :



Այսպիսի ապականեալ ոգւով մարդիկը, այսպիսի զէնքերով զինուորեալ եղբայր եղբօր վրայ և որդի հօր, զէնքերը դարձուցած կը տեսնեմք հիմայ մեր հաւատոյ ուղղափառութեան և աղբիս միութիւնը, որով և մեզի ևս պատճառ կուտան իրենց դէմ զէնք վերցընելու . բայց գիտցան վերը ըսածներէս, որ մեր զօրագլուխը Վրիստոս է, իրենցը սատանայ . ու մեր դրօշակին վրայ Աեր նկարուած, իրենցին՝ Աարէութիւն :

Աւ որովհետև խաբողը՝ միշտ խաբուած ալ կ'ըլլայ, մեր խեղճ Ախիթարեանքն ևս այսպէս մեզի խաբուեցան իրենց Ռազմավրէպները մեր ձեռքը տալով, որ են իրենց խաբէութեան զէնքերը, ու հիմայ իրենց հակառակորդէն յաղթուելով, իրենց զէնքը և խաբէութեան դրօշակը, որ մեզի դարձուցին, մենք ևս ահա կ'ելլեմք անոնցմով պատերազմելու :

Բայց դեռ այս իմանալի պատերազմը չը մտած, քանի մը խօսքով ևս մեր սրտիցաւը յայտնենք Ախիթարեանց այս Աստուած ընդդէմ խաբէութեանը համար, ու մեր սրտի խորին տրամութիւնը . որ իրենց յայտնի ազգասիրութենէն, և ընդդէմ քահանայական կարգի ծածուկ խաբէութենէն՝ մեր հօգուոյն վրայ համատարած տպաւո-

րեց , որովհետև ասով մեր կարծիքը ճշմարտեցին , երբոր մեր արդարախիղճ ժողովուրդը անոնց ներկայ ժամանակիս ուսումնական փոյթը տեսնելով , անոնց ջատագով կը հանդիսանային՝ ընդդէմ մեր փորձեալ ճշմարտութեանը . այժմ դժբաղդարար զանոնք մեզի հետ միատեղ համազգական վրէժխնդրութեամբ իրենց դէմ զէնքի հրաւիրեցին :

Վասն զի մեր եղբայրասէր ժողովուրդը Մխիթարեանց պատրուակեալ ազգասիրութեանը խաբուելով , մոռցած էին բնաւ անոնց հին նախապաշարման անցած դնացած աղէտալի հետեանքները , ժողովուրդը՝ հաւատքէ հատուածելը , որդի ՚ի հօրէ , դուստր ՚ի մօրէ հանելը , սոսկալի գէպքերը , Տիւղեանց անցքերը , սրոյ հըրաւէրը , և այլն և այլն , որ այսքան երկպառակութեան և եկեղեցւոյ միութիւնը հերձելու պատճառ եղած են , ու խրամատած Քրիստոսի այգին : Մոռցած էին այժի և այնքան մոռցած , որ խաբէութեան կարծիք՝ այլ ևս չէր մնացած մէջերնին . ամեն մարդ անոնց ոսկեղօծ գրքերը տեսնելով ու Նազմավրէպները կարդալով՝ կերպ կերպ խոստմոնքները , ազգասէր համարուած յորդորանքները և համազգական միութեան սէրը տեսնելով , նոյն ազգութեան նոյն

միութեան սիրովը բորբոքուած էին . իրենց համազգի եղբարց դարձի վրայ վստահ էին , և նոյն ազգասիրական միութեան փոյթը անոնց վրայ ևս ներգործած կը համարէին , ևս առաւել , երբ որ Համազգեաց ընկերութիւնն ևս կազմուեցաւ . հաստի էին թէ իրենց համազգի եղբարք ազգի լրութեան հետ վերստին միանալով Մխիթարեան վարդապետաց ջանիւք , այս լուսաւորեալ դարուս մէջ պիտի ազգը ամբողջացնէին , այն բաժանման խրամատութիւնը պիտի կարկատէին , ու եւրոպացոց ազգաց պարծանօք ցոյց տային իրենց ճշմարիտ ազգասիրութեան պտուղը . ու յետ կենային իրենց նախնի կուրութեան ճանապարհէն , և հերքէին ազգատեաց ծնողաց նախապաշարմունքները , որոնք կուբօրէն նախնեաց հետեած էին , որովք և զիրենք իրենց ազգական եկեղեցիէն , իրենց արմատէն հերձեալ՝ Հռովմայ եկեղեցւոյն վրայ պատուաստեցին . ու այսքան խռովութիւն ևս տեսան իրենց պատրիարքական աթոռոյն մէջ՝ ի Աոստանդնուպօլիս : Ինչպէս իրօք մեզի կ'աւետէին այս յոյսերն մինչև հիմայ մեր ազգային օրագիրներն ևս , որոնք մերձաւորք են իրենց քաղաքաւ և աղգաւ :

Սոցսմ էինք այն մենք ևս այս ամենը ուշուտով տեսնելու կը բաղձայինք , որ ինչ-

պէս Մխիթարեանց հին ու նախապաշար-  
ուած վարդապետաց ատելութեամբ ազգէն  
բաժնուած էին մեր համազգի հատուածը ,  
այնպէս ևս անոնց նոր վարդապետաց սիրոյ  
առաւելութեամբ և ազգասէր եռանդեամբ  
ազգի հետ միանային , ինչպէս կը պահան-  
ջեն ազգասէր յօգուածները եօթներորդ  
Բազմավէպին :

Մեր ևս մեր կողմանէ մեր ազգի միու-  
թեան սիրովը վառուած , ու մեր ազգային  
եռանդը ցուցընելով՝ մեր համազգի կար-  
գակցաց և ժողովրդոցը , բերան չէր մնա-  
ցած այլ ևս մեր մէջ , որ անոնց անցած  
սխալմունքը երեսնին տայ . այլ ամենքս ևս  
անոնց սիրով կը լսէինք ազգի օգտին ան-  
ուամբ զրաւորական խընդիրներու մէջ ,  
զիրենք սիրով կ'ընդունէինք իբրև մեր օ-  
տարացած ու դարձած եղբայր , և գիտէինք  
ևս , որ ինչքան 'ի բաժանմանն մեզի գէմ  
մեղանչեր են Հոովմայ գահին առջև իրենց  
աշխարհական օգտին համար , այժմ 'ի  
դարձմանն իրենց ազգի օգտին համար՝ պիտի  
խոստովանին նոյն գահին առջև և 'ի լուր  
աշխարհի իրենց զղջումը , իրենց ճշմարիտ  
դարձը , և հաւասար ազգաց՝ իրենց ազգի  
միութիւնը պահեն . ու առաջին թշնամի  
իրենք դառնան իրենց ազգի և հայրենեաց  
թշնամոյն , զորն կը պահանջէ ներկայ լու-  
սաւորեալ դարը :

101



ԼՆՍ յուսոյ կիտին վրայ՝ այլ ևս բան  
 չէր մնացած մեզի մեր մէջէն բաժանման  
 խտրոցը բառնալու. մանաւանդ թէ խտրոց  
 ալ չի կար. իսկ որ ինչ մեր նախնիքներէն մեր  
 համազգեաց դէմ գրուածքներ կային այս  
 դարուս սկիզբներէն կամ ևս յառաջ մնա-  
 ցած, անոնց նախնեաց ու մեզմէ բաժնուելու  
 սկզբնապատճառ եղող անձանց նախապա-  
 շարմանցը փոխադարձ ատելութեանց պը-  
 տուղներ համարելով, մէկ դի ձգած էինք իբ-  
 րև պատճառ բաժանման, տեսնելով որ նոյն  
 մեր համազգի եղբարք իրենց մէջ առիթ մը  
 չթողուցին այլ ևս, որ դարձեալ ձեռք առ-  
 նուէք ու անցածը միտք բերենք: ԼՆԼ արդ՝  
 ձայն կուտայ մեզի Կոստանդնուպօլսոյ ԼՂ-  
 գիս մեծ մասը “ Լ՛ն զգէն և զասպար քո  
 և արի՛ օգնել ինձ ” վասն զի՛ կրկին ձեռք  
 առնուեցաւ “ հին զէնն սպաննողին, որ  
 զնախանձն որսաց ՚ի կորուստ ”: Աւստի ակն  
 ունիմք թէ “ Գաստեցէ տէր զայնոսիկ, որք  
 դատեն զմեզ . . . Եղիցին նոքա որպէս  
 փոշի առաջի հողմոյ . . . Ղանապարհք  
 նոցա ՚ի խաւար և ՚ի գայթակղութիւն, և  
 հրեշտակ Լստուծոյ հալածեցէ զնոսա: ”  
 Բայց ահա՛ մեր սրտի ցաւը և խորին  
 տրտմութիւնը ու մեր համազգական վրէժ-  
 խնդրութեան պատճառը մեր համազգեաց  
 դէմ. խեղճ եղբարք, իրենց հոգևորակա-

65-13003

(ԵԲԶ 14)



նաց նախանձուն և խարէութեանը զո՛հ ե-  
լած , որ անձն ակնուներ , որ հոգի կը  
յուսար այսքան միութեան փորձերէն ետ-  
քը (գուցէ ժողովուրդը ևս համակամ չէ ի-  
րենց հոգևորականաց խարէութեանը) , որ  
Մխիթարեանք իրենց ոսոխին դէմ մաքա-  
ռելու ժամանակը՝ ղէնքերը մեզի ու մեր ե-  
կեղեցւոյ դէմ կ'ուղղէին , բայց լաւ գիտնան ,  
որ մեր ուղղափառ եկեղեցւոյ զօրագլուխը  
Քրիստոս ըլլալով , և դրունք դժոխոց  
յաղթահարել զնա ոչ կարեն :

Անմիտք . իրենց դէմ Վօլէճցւոց պար-  
սաւազրբի պատասխանին՝ մեզի դէմ կ'ուղ-  
ղեն . ու փոխանակ զանոնք յաղթելու՝ ըզ-  
մեզ իրենցմէ կը խորշեցնեն . իրենց սեպ-  
հական տիտղոսները բառնալու տեղը՝ կ'առ-  
նուն մեր ազգի վրայ կը դնեն , ուստի իրենք են  
հերձուած : Վօլէճցիք իրաւամբք գրած են ,  
վասն զի իրենք իսկ են հերձուածող , հե-  
րետիկոս , մոլորեալ . թէ որ մէկը հարցնէ՝  
ուստից , պատասխանին ամեն ազգ կուտայ՝  
Հայոց եկեղեցիէն , Հայոց ազգէն :

Թէ որ հայոց եկեղեցւոյ գլուխը փափն  
է եղեր , իրաւունք ունին այս յատկուի-  
ները մեզի տալու , որովհետև ասով փա-  
փէն հերձուած՝ Ղուսաւորչին յարուած կը  
նմանիմք . իսկ թէ որ Ղուսաւորիչն է , ինչ-  
պէս ամեն ազգ ու նաև իրենց խարէական

տետրակը առ փափն կը վկայէ, որ իրենք  
ազգաւ հայ և Ղուսաւորչակրօն են, ու հի-  
մա լատինակրօն եղած են. ուրեմն աշխարհ  
ու իրենք կը վկայեն, որ իրենք են հերձ-  
ուածող, հերետիկոս, մոլորեալ՝ Հայոց ե-  
կեղեցիէն, Հայոց ազգէն ու Հայոց ուղ-  
ղափառ հաւատքէն. որ եկեղեցին ալ որ  
յարին, դարձեալ հերձուածող են, դար-  
ձեալ հերետիկոս, դարձեալ մոլորեալ. ինչ-  
չու կը նեղանան, ինչու ստելու կը ջանան  
զխեղճ Վօլէճցիները, որ ճշմարտութեանը  
վկայեցին : Աոյն իսկ մեծագոր ( )սմանեան  
բարձրագոյն դուռը զիրենք հերձուած չի՞  
ճանաչեր հայոցս ազգէն . “ Հայոց ազգը  
կը ճանաչէ բարձրագոյն դուռը (կ'ըսէ կայ-  
սերական հրովարտակներուն մէկը) Աթո-  
լիկ ազգը չի ճանչնար ինչ ըլլալը, բայց ե-  
թէ հայոց ազգէն հերձուած մը ” :

Իրենց տպած տետրակը մենք չունիմք  
մեր տեղւոյ հեռաւորութեան համար. բայց  
անոր խամրեցուցիչ ու ցուրտ խօսքերը,  
ըստ որում մեզի բերաւ մօտերս մեր ազ-  
գային լրագիրներէն բարձրաթուիչ Աոյեան  
Ղաւնին 30 թիւ, որ խեղճ Աբրաքուոց խա-  
բէութեան դրօշակներն են գրքի մէջէն քաղ-  
ուած, մենք ալ ճշմարտութեան դրօշակ-  
ները անոնց դէմ հանելով, կը պարտա-  
ւորիմք զամենն ևս ջնջել, ու խորտակել ի-

րենց սրտի և հոգւոյ մէջ . և Սուրբ նոցա  
մտցեն 'ի սիրտս նոցա , և աղեղունք նոցա  
փշրեսցին՝ որով իրենց ձեռքի տակ եղած  
մեր համազգի ժողովուրդն ևս տեսնելով ,  
յաւիտենական նախատիւքք անոնց վրայ թո-  
ղու , և ճանաչէ , թէ այս խարէութեան  
գործիքն են եղեր , որովք իրենց ծնողքը ի-  
րենց ազգէն բաժներ , ու զիրենք ալ այ-  
սօրուան օրս այս ալէտալի բաժանման մէջ  
թողուցեր են . ու հիմայ երբոր կուզեն այս  
բաժանմունքն ալ վերցնել , ու իրենց հայ-  
րենի եկեղեցւոյն և ազգի լրմանը հետ մի-  
անալ , ազգասէր Սխիթարեանք կրկին այն  
խարէութեան զէնքերը առած՝ ժողովուրդը  
երկպառակելու , ու հակառակ Վրիստոսի  
սիրոյն՝ առեղութեան ու կրկին շփոթութեան  
մէջ ձգելու կը ջանան , որ չքլայ թէ ազգի  
միութեան բաղձանքին հասնին . բայց ինչ  
ընեն չընեն , միութեան րոպէն զարկած է ,  
և Մատուածային է վճիռն : Ընոնք (միսի-  
թարեանք) վաստրկեցան , ժողովուրդն ալ  
հարկաւ իրենց վաստակը պիտի մտնէ : — Ե-  
րևելի՛ օր Հայոց համազգային միութեան .  
պիտի քարոզեն ամեն դարք , ամեն տարե-  
գիրք :

Եւ այց չենք կրնար մեր ճանաչողութիւ-  
նը ծածկել . այսինքն Մարացի կրօնաւորաց  
առ երեսս ազգասէր ձեւանալը , և խարե-



բայաբար զժողովուրդը շողոթորթելը, ու ա-  
տոր հակառակ՝ մեր համազգի եղբարց (ժո-  
ղովրդոց) ճշմարիտ ազգասիրութիւնը, որ  
այս նպատակին մէջ յառաջադիմելու, այ-  
սինքն, ազգի միութեան և միաբանութեան  
փորձը ընելու մտօք՝ կազմեց զհամազգեաց  
ընկերութիւնը, և իբրև իւր խորհրդոյ և հո-  
գւոյն նկարագիր՝ հրատակեց յայտարար նա-  
խահարգութիւնը (Արշալոյս թիւ 257) առ ՚ի ի-  
մանալ, թէ ազգը երկուց կողմից ևս ինչ  
գաղափար պիտի ունենար նոյն ընկերու-  
թեան վրայ:

Ազգը իր ճշմարիտ նպատակին հասնե-  
լու, արդեօք ազգութեան ու միութեան սէ-  
րը չէ՞ր որ ընկերութեան բերանը դրաւ  
այս խօսքերը իբրև իրեն հիմն հաստատու-  
թեան, որ զմեզ ևս իրենց հետ մէկ տեղ ազ-  
գութեան ոգւոյ վրայ երդուելու հրաւիրեց.  
«Մի ազգ եմք և ՚ի մի միաբանութիւն ժողով-  
եալ. երթիցուք ուր ձգիցէ զմեզ ճշմարիտ  
ազգասիրութիւն. և զոր առաջի արասցէ  
խորհուրդ՝ արկցուք ՚ի գործ » (յայտարար  
նախահարգութեան ընկերութեանն Համազգեաց .  
Արշալոյսն):

Աս խօսքերս չէին զմեր համազգի որ  
ժողովուրդը առաջնորդեց ազգի միութեան  
ասպարէզը, որով և ազգասէր ու ազգա-  
տեաց դասը որոշեց, և այս առաջին փորձա-



առութեան աստիճանը վեր ելելու ատեն՝ պէս-  
պէս ալեաց ու ազգատեցութեան յուզմունք-  
ներու մէջ կը ծփար այս Ազգի միութեան  
ոգույ նաւակը հակառակորդ դասէն, զո-  
րոնք կը յարուցանէին Հասունեաններ,  
Սելվեաններ, Ղեւզահիրճեաններ, Ասկո-  
ներ, Աոկոներ և այլք:

Իայց ասոնց և ոչ մէկ փոթորիկներու  
մէջն ևս տակն ու վրայ չեղաւ ընկերու-  
թիւնը . այլ իրեն հիման վրայ իրրև 'ի վե-  
րայ վիմի հաստատնոյ կեցած՝ քաջութեամբ  
ամեն մրրիկներն ալ ցրուեց . ու յաղթու-  
թեան վայրկեանին մտեցած, քաջալերու-  
թեան ձայներ ալ հնչեց. « Այսպէս կազ-  
մեալ 'ի մի սէր միաբանք, թէպէտ եմք 'ի  
ժամուս տկարք, և սակաւուց թուիմք լի-  
նել ձեռնհասք, սակայն երկմտեսցի ոչ  
դք՝ թէ այսու զմեծամեծս տարցուք 'ի գլուխ  
. . . 'ի ճանաչումն անձին . առաւելուլ յըն-  
կերսիրութեան և յազգասիրութեան . . .  
'ի զարգացումն ազգին յամենայնի՝ այսինքն 'ի  
հաւատս . . . 'ի միասիրտ, միակամ, խաղա-  
ղասէր շողկապումն անձանց՝ 'ի մի միաբա-  
նութիւն և այլն: »

Այս ամեն քաջալերական ձայները մին-  
չև բուն Հայաստանի աւերակներն ալ ար-  
ձագանք տալով, « Արդ զգլուխ 'ի վեր ամ-  
բարձեալ (ազգն) յաւերակաց շիրմացն,

Թախի՞ծ մեզ արկանէ որդւոցս իւրոց՝ մի  
զանց առնել զիւիք 'ի կենդանացուցանել  
զնա : ”

Հիմա մեր համազգի եղբարքն ևս տես-  
նելով , որ իրենց կարգաւորները այսչափ  
տարիազգասիրութիւն քարոզելէն , աշխարհք  
լեցընելէն ետքը , իրենք նախ առաջին ազ-  
գատեաց դասը կազմեցին , ու հին ազգատեաց  
Վօլէճցւոց դասն անցան , յետ կը փախչին  
իրենք ալ անոնց ազգատեաց ոգիէն , ա-  
նոնց խարէութեան վտանգներէն . ու մեղի  
հետ մէկ տեղ՝ « Միասիրտ , միակամ ,  
խաղաղասէր , անձամբ շղկապուած 'ի մի  
միաբանութիւն ” պատերազմի կ'ելլեն Մ.բ-  
բացւոց դէմ . որ անոնց ազգատեցութեանց ,  
ստութեանց ու խարէութեանց վրէժը ճըշ-  
մարտութեամբ պահանջեմք անոնց աս ներ-  
կայ գրուածներովս :

Ինչպիսիք Վազմավրէպի եօթներորդ հատորին  
մէջ (եր . 98) ազգասիրութեան առաջին յօդուածը  
մեզմէ կը պահանջէ ազգասիրութիւն , այս-  
պէս ասելովն . « Մարդկային բնութիւննիս  
մեզի կը սորվեցնէ մարդասէր ըլլալ , սիրել  
մեր ազգայինները՝ քան զուրիշ ազգերը ” :  
Մյուսպէս ազգասիրութիւն մեզմէ պահանջե-  
լէն ետքը , ասօրուան օրս իրենք ազգա-  
տեաց եղան աշխարհի առջև . իրենց տպած  
տետրակին եր . 58 — 59 . (ինչպէս 'Աոյեան

Մշակունոյ 30երորդ թերթին մէջ) . ուր կ'ըսեն . թէ « Սոսր է որ Միխիլաբեանս հայտօրոտնիւնը արդարացնելու համար՝ Հայոց պատրիարքին դատանունիւն մը սաղելը են : »

(Թէ որ իրաւ սուտ է նէ , Սխիթարեանք հայ ըլլալով՝ հայասիրութիւն չունին , ազգատեցութեան դրոշմն ալ կոխած են իրենց ճակատին վրայ . (նոյն Տաղմավրէպին մէջ էր . 99) « Ծնողասիրութեան խրատ տալէն մեծ նախատինք կրնայ ըլլալ . . . օտար ազգ մը լսելու ըլլայ՝ իրաւ որ կը գայթակղի մեր վրայ . կարծեմ մենք ալ շատ ամօթով կը մընանք . . . ազգը չի սիրելը՝ ծնողքը չի սիրելէն վար չի մնար . ծնողքը չի սիրողին ի՞նչ ըսենք , մարդ չէ գազան է կ'ըսենք , իր ազգը չի սիրողը , իր ազգը չի պատուողն ալ՝ չազգի , տմարդի բան մըն է : »

« Հայ մը (անդ էր . 102) որ իր ազգը նախատէ , թէ կ'ուզենք արդարացնել , պէտք է ըսենք , որ ամենատոգէտ է կամ ամենախենթ . թէ չէ՝ ըրածը եօթը դրժոխքի հայհոյութիւն պէտք է սեպել » ու խիկարը երբոր « Ծնողքը անիծողին լեզուն կը կտրէին » կ'ըսէ « ազգը անիծողին լեզուն արմատէն խլելու է , վասն զի իր ծնողաց ծնողքն ալ կ'անիծանէ » : Եւ խօսքերուն վրայ իրենք կ'աւելցնեն , թէ « Սոսր հայ ազգը անիծողին՝ քիչ մ'ալ խորը իջնալու



է . վասն զի հայու թեամբ՝ ամենուն նա-  
խածնողքն ալ կ'անիծանէ : ”

Ուրեմն երբոր Միսիթարեանք իրենց  
տետրակին մէջ (եր 29 և 39) չէ թէ ի-  
րենց ծնողքը միայն կ'անիծանեն , այլ և  
Մատուցոյ գոհութիւն ալ կուտան , որ « Ինչ  
հերետիկոս ալ են նէ՝ հելէ Հայ չեն ե-  
ղեր ” : Սենք ալ ասոր վրայ կ'աւելցնենք .  
որովհետեւ « Եթէր դժոխի հայհոյութենէ ” ալ  
վեր է իրենց տուած ազգին աս անէծքը՝  
ուրեմն իրենք ալ խնայան դժոխի են :

Այլ և ըստ որում « Իր հայ ազգը ա-  
նիծողին լեզուն արմատէն կտրելու և  
քիչմ՝ ալ խորը իջնալու է — Մենատգէտ  
կամ ամենախենթ — սեպելով , ասոր վրայ  
ալ կ'աւելցնենք . չէ թէ միայն իրենց լեզու-  
ները արմատէն , հասպա նաև շրթունքներն  
ալ մէկ տեղ խլելու է . որոնք իրենց ամե-  
նագիտութեամբն ու ամենիմաստութեամբն՝  
բոլոր Հայ ազգը անիծելէն ու նզովելէն  
ետքը , որով և մարդկութեան արմատն ալ  
բոլորովին , կը դառնան անամօթաբար նոյն  
տետրակին եր , 54 . իրենք զիրենք վերստին  
— Հայկայ որդի — կը կոչեն . — Մհա — Հայ  
մըլեր ազգը նախատող . . . ամենատգէտ ու  
ամենախենթ — թէպէտ ամենագէտ ու ամե-  
նիմաստ : ”

Մի , ինչ պատասխան պիտի տայ Մս-



տունծոյ . ի՞նչ պատասխան պիտի տայ մեզի  
Ա և Բ ազգասիրութեան յօդուածները գը-  
րող Հայրը՝ ընդդէմ իր ճառերուն, երբ  
որ մեզի կուտար “ Չորաւոր յորդոր ազ-  
գասիրութեան ” ուր որ լեզուն մնացեր է,  
կ'ըսէ, դեռ ազգասիրութիւն ալ կայ հոն,  
ուր որ բոլորովին լեզուակորոյս են եղեր,  
հոն նաև ազգասիրութիւնը բոլորովին կո-  
րածի պէս է ” եր. 130 : Ու ետքը մեզմէ  
կը պահանջէ, իբրեւ թէ ազգասիրութեան  
ոգիէն պաղած ըլլայինք, կամ թէ իրենք  
“ Ղրսեցի ” մենք “ Ներսըցի ” որ “ վերցը-  
նենք աս կերպ կերպ զանազանութիւննե-  
րը, որ շատ հեղ տուններնիս փլուցեր են,  
կրնան հիմներնիս ալ փորել . . . վերցնենք  
աս գաւառական զանազանութիւնները, որ  
բարակ առուններու կը նմանին, շատերը տղմի  
մէջէն երթալով, և բուն աղբիւրը փրնտը-  
ռենք ու Ֆիաննի մեր ազգակցութեան սի-  
րովը . իմանամք, որ ասոնք են մեր մէջ  
առակ եղած ու նզոված անմիաբանութիւ-  
նը սնուցանող ” (անդ) :

Վերստին ան քաջենք, որ հիմա Սը-  
խիթարեանք աս յօդուածները ստութեան  
սահմանին մէջ փակեցին . ասոնք են որ ա-  
մեն կարգացած ատեննիս մեր ուսումնասէր  
եղբարց հետ՝ մեզի, ազգիս միութեանը հաս-  
նելու բաղձանքով, ուրախութեան արասուք-

ներ թափել կուտային . ու միմեանց մենք ալ  
յորդոր կ'ըլլայինք , որ մեր բաժնուած եղ-  
բարց հետ փութանք միանալու , որոնք նախ  
քան զմեզ առ դուրս հասեալ կան՝ մեր  
հայրենեաց աւերակաց մէջ գլուխ վերցուցած ,  
“ Հոյակապ քաղաքաց մնացորդները զըն-  
նելու . քարագործ ճարտարարուեստ գրը-  
ուագները , աս դիս կիսակործան տաճար-  
ները . ան դին ճախարակեայ սիւնները և  
այլն . (Ե . հատոր Բաղմ) :

Հիմա չըլլայ որ ազգասէր հօրը մեր մէկ  
մասին վրայ նշմարած ը իրենց իսկ միաբանու-  
թեան վրայ կատարած ըլլայ , ու իր իրաւա-  
ցի ճանչցուածը՝ իրենց վրայ իրաւ ելլէ . և  
այսպէս , թէ որ մեր մէջ հայ լեզուն մնացեր  
է , ազգասիրութիւն ալ կայ . իսկ իրենք որ  
հայրենակորոյս եղած են , “ լեզուակորոյս ”  
ևս եղեր են անշուշտ . և լեզուակորոյս ըլ-  
լալովն իրենց ազգասիրութիւնն ալ բոլո-  
րովին կորած է :

Իմացանք ու իրաւ իմացանք . “ թէ սուտ  
է որ Սիսիթարեանք իրենց հայասիրութիւնը  
արդարացընելու համար՝ այս և ասկէ աւելի  
ազգասէր յօդուածները գրած են . սուտ է ե-  
ղեր “ Երջ հարձեւց անխաբանութեան հայոց ” ըս-  
ուած ճառը . (Ա . հատ . Բազմավրէպին . )  
վասն զի՝ իրաւ որ կ'եղծեն հայոց հետ միաբա-  
նութիւնը և “ Սիսիթարեանք վն երջեար հայոց

Էհր միանար 37 տեսրակին եր . 20 : « Եւ ի Եւ-  
ճիճեանի վրայ հայոց Էհր հոբերմո-ճիճան ունենալու  
հարժիտը 37 (եր . 23) . . . « Թէ ոչ ոք կ'ըն-  
դունի , որ Միխիլայեանք ՚ի հայո-ճիճան հակաւ են 37  
(եր . 29) Թէ « սուր է որ Միխիլարեանց պար-  
ճառու հարիւրաոց անյինք հայ եղեր են 37 (եր 37) :

Սուտ է և իրաւ սուտ , որ Միխիլարե-  
անց պատճառաւ և ոչ մէկը հայ (կաթողիկ)  
եղած չունի . որ Միխիլարեանք ՚ի հայու-  
թիւն չեն հակեալ . որ Եւճիճեանը հայոց  
հետ մտերմութիւն չունէր . որ Միխիլարե-  
անք հայոց հետ չեն միանար . և ոչ միայն  
սուտ , այլ և երդում ևս բրած են , « Թէ  
Միխիլարեանք երդում կ'ընեն , որ չայտ սո օրուան  
օրս հերյոսածող և հերեպիտո են 37 (եր . 96) :

Եւ ազգասէր հայրը իրեն այսքան բա-  
նիւ խօսեցած ազգասէր ճառերը դործնական  
կերպիւ ստեղէն ետքը , այլ ևս որ աղբիւրը  
աս օրուան օրս կ'ուզէ փնտռել ու մեզի հետ  
միանալ , և իրեն ազգասէր եղբարքը մեզի հետ  
միացընել , որոնք կ'ըսեն « Թէ չայտ հերյո-  
սածող են 37 իրենք ալ ' « չայտ որդիք են 37 :

Եւ ՏՓ . գուցէ ազգասէր հայրը իր  
ազգասէր եղբարց հետ մէկ տեղ ' ան « Բա-  
րաի առանկրա 37 մէջ խրուած են , որ « Տղի  
Տղին երկալով 37 զմեզ ևս կ'ուզեն հոն իրենց  
հետ միացնել , բայց հիմա որ իրենց տես-  
րակէն իմացանք , « Թէ Միխիլարեանք չեն եր-



Իսպ Լայոց հետ միանար և ուստի մէք ևս չէ  
թէ իրենց հետ չեմք միանար, այլ նաև ի-  
րենց խօսքերուն ալ չենք կրթէք հաւա-  
տար. վասն զի իրենց աս գրուածքներն են,  
որ Ասիժարեանց քարոզութեանց “Վար-  
ժիւն են” որով կը քարոզեն, թէ չեն ի-  
րենք հայոց հետ միանար. ապա ո՞ր ազ-  
գակցութեան սիրով միանալ կ’ուզէ հայրն.  
յայտ է թէ խօսքով շինածը՝ գործքով կը  
քակէ. կամ թէ մէկին գործքը զմէկալինը  
կ’եղծէ. — վայ ան մարդուն, որուն խօսքը  
գործքին չի համաձայնիր :

Ես ալ կը յուսացուէր Լ. Վ. ի նման  
ազգասիրի մը բերնէն. գուցէ ասոնք լսելէն  
ետքը՝ պիտի պատասխան տայ, թէ ինքը խա-  
պար չունի այն տեսրակէն, թէ տհաճ է ե-  
ղեր անոր հրատարակուելուն. աս բաւական  
չէր. պիտի իմանար որ այն տեսրակն եղ-  
ծումն է բոլոր եղբ կործեաց Լայոց անխա-  
նութեան ըստած իրեն ճառին. պիտի իմանար  
որ՝ հերքումն է իրեն եօթնամեան հրատա-  
րակած ընդհանուր ազգասիրական վաստա-  
կոցը, պիտի իմանար որ քանի քանի ազ-  
գասէր սրտեր որ գրուած էր, և ինչքան փո-  
խադարձ սէր որ շահած էր եօթ տարուան  
մէջ, պիտի կորսնցնէ եօթ ըոպէի մէջ. պիտի  
իմանար դարձեալ, որ մենք ընդ բոլոր ազ-  
գին համոզուած էինք ու վստահ, չէ թէ



Թնկրեաններու, Լազըճեաններու և այլն, այլ իրեն ազգասէր յօդուածներովը՝ իրեն նման ազգասիրի մը ոգւոյ վրայ, որով կարող էր նախ իրեն կրօնակից ազգատեացներուն հետ միանալ, և ապա մեզի հետ ազգակցութեան սիրով: Բայց մենք աս մարդուն որ մեր սրտի և հոգւոյ մէջը տեղ ունէինք, հիմայ ի՞նչ ըսենք . . . :

Ի՞նչ ըսենք բերանոյն, որ կ'եղծէր հայոց անմիաբանութեան կարծիքը, ո՞վ կը կարծէր, թէ իրենք Մխիթարեանք հայոց անմիաբանութեան հիմը անկարծիք դրած են. ո՞վ կը կարծէր թէ աշխարհի իրաւանց առջև՝ Հայոց ազգը ուրացող վասակաց հետ իրենք կը լինին. Վ Լոնդ քահանայի «Սուրբ մոմը մունքը իրենց ականջը շի՞ մտներ, որ իրենք են բարրառած, երբ մենք կարդալու ատեն, կարծես թէ, Հայաստանի անկման վրայ լացողաց խումբը կը կազմենք, ո՞վ կը կարծես. թէ «Ոգին Հայաստանեայց» որ Հայաստանի որդւոց սիրոյ և միաբանութեան լուրը կ'աւետէ Լճատն Մաթիսի ձիւնապատ գագաթէն, հիմա ազգի անմիաբանութեան հիմա կրկին երկպառակութեան բօթը կը գուժէ:

Ոչ մէկի մտքէն ևս չէր անցներ, թէ Մխիթարեանք ազգը լուսաւորելու և միացնելու համար որ ոտքի ելած էին, ու Տանտ Գանտ կ'ըսէին, հիմա ոտք ելլեն, ու

« Իջօններոցը և ծանր պարճաւ » (Հանեն) տարա-  
ձայնութիւններ, երկպառակութիւններ, ո-  
րոնց աղգասիրութեան տուած մեծ վնասը  
ամենուն յայտնի է . . . կրօնքը (կ'ըսեն)  
ամեն բարոյական կրէ տաւելի մարդուս բնութեան  
խորը նախնացած ըլլալով՝ հոգեւոյն հետ խառնած  
անկէ շարժած սիրտը սաստիկութեամբ կը շարժի ին-  
քորայն ին՝ շարին մեջ . մանաւանդ որ մեր ազգը  
'ի բնէ կրօնատէր հոմ՝ կրօնապաշտ ազգ է, շատ սաս-  
տիկ ունի սա կիրքն ալ . այն գովելի կրօնասիրութեան  
հետ՝ ամենազգո՞վելի յամարութեան մ'ալ ունենալով,  
որքէօրութեանն ալ վրայ եկած, խօստ խօստի հետ շարե-  
նալով համեմատել սա արդար քաւել, շատ հեղ կը-  
տիւններու, արեւ շափեանց և մեծամեծ շարեաց պար-  
ճաւ եղած է . վերջապէս ազգերնիս շարեից նախ-  
արարութեան պէս երկուս բաժնուած է վերին վար, մեկ  
մասը (Յորայն), մնացածը Իւրայելին . հիմա մտիա-  
նակ զգուշութեամբ և խաղաղութեամբ սա բաժնու-  
ման վրայ մտնելու, ինչ որ բանութեամբ մեկ մեկու-  
տաշուի՝ ինչ կ'ըլլայ . Արեւմտեան վերարկուն  
պէս օրաններէն կար շար (Եօթներորդ. Հատ .  
Իւզմա . եր . 152) :

Այս, ցաւալի խօսքեր, որոնք ազգի  
միութեան խրամատած մարմնոյն, որ արդէն  
ողջացած կը սեպուէր՝ կրկին վերքերը կը նո-  
րոզեն . ախ . որոնք գործքով ներհակը կ'ը-  
նեն, ու խօսքով ըսելու չեն ամաչեր . հիմա  
տեսնենք ընդ դէմ կրօնի, որ մարդուս

“ Զոգոյն հեք խառնաք ” մեր սիրտը ո՞վ  
չարժեց . մեր ուղղափառ կրօնքը չէ՞ զմեզ  
չարժողը , Սիսիթարեան հարք , որ ձեր երկ-  
սայրաբան բառերովը թիւր հանելու կը ջանաք  
ու կըսէք . “ (Թե Սիսիթարեան և հայոց հերյոսա-  
ժող լին ըսեր խօսք՝ զբարբառսն ի Կ (Թե  
ձայտ ասցոսան օրս Զերյոսաժող և Զերեթիկոս  
նն ” :

Ըհա՛ Սիսիթարեանց՝ ազգասիրութեան  
տուած մեծ վնասը , ահա՛ մեր մէջ պատա-  
հած ցաւալի և անվայել դիպուածները . . .  
Ըհա՛ կռիւներու , ատելութեանց և մեծա-  
մեծ չարեաց՝ իրենց տուած պատճառը : Ը-  
հա՛ զազգը վերէն վար երկու բաժնող երկ-  
սայրի սուրը . բայց գիտնան որ այս երկ-  
սայրի սուրերը որքան մէկովը մեղի դպչին ,  
այնքան մէկալ բերնովն իրենց սիրտը կտոր  
կտոր կ'ընէ , կը խոցոտէ :

Զիմա մեր կրօնասիրութեան վրայ ե-  
կած յամառութիւնն ալ վերցնենք տգի-  
տութեան հետ , որն որ իրենք իրենց փոխ  
առած կրօնապաշտութեան հետ կը սնուցա-  
նեն , ու “ Խօսք խօսքի հետ համեմատե-  
լով՝ ուղիղ դատենք ” :

Զայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառ  
կրօնից արմատէն իրենք հերձուելով ու  
Զուովմէական կրօնից արմատին պատուաստած  
ըլլալով , մեղի հերձուածող կ'ըսեն : և ազ-

գասէր ըստած այս ճառերովը կ'ուզեն, որ  
արմատը պատուաստին հետ միացնելով՝  
ուրիշ արմատի մը վրայ միանան, որով և  
մեր ազգութիւնը բառնան, Թէպէտ իրենք  
« Լ՛ղգաւ Հայ են » . — Լ՛ս է եղբր, որ  
« Լ՛զգերնիս Հրէից Թագաւորութեան պէս  
երկու բաժնուած վերէն վար . . . հիմա . . .  
զգուշութեամբ և խաղաղութեամբ առ բա-  
ժանմունքը միացնելու » ատեն՝ կ'ուզեն որ  
ազգութիւնը բառնան, Հռովմայ հետ մի-  
ացնեն, այնպիսի ատեն՝ յորում ամեն  
ազգ իր ազգը կը կանգնէ. ու ասոր համար  
ևս « Լ՛ստուծոյ ընկածը Լ՛ստուծոյ կը խոչըն-  
դի թէ զ՛ստուած ալ իրենց խաբէութեա-  
նը և ազգի բարձմանը դործակից կը խնդ-  
րեն . ինչպէս երբեմն նախահայրը՝ կնոջ սա-  
տանայէն խաբուելոյն՝ և իրենը 'ի կնոջէն՝  
զ՛ստուած պատճառ կը դնէր, այսպէս Լ՛ս-  
տուծոյ ընկածը՝ աստուծոյ կը թողուն Ար-  
թիթարեանք . իրենց « ընկած սէրը միշտ  
կը ցուցնեն, ու կը ջանան որ Հայոցս հետ  
միակրօն ըլլան ուղղութեամբ », միակրօն  
ըլլան, բայց « Հայոց հետ լին միանաք » տես  
տեսրակին մէջ : Լ՛ս ուղղութիւնն ալ այն  
է, որ երբեմն մեզմէ կ'ուզէին . որ Հռով-  
մայ փափին անունն ալ եկեղեցիներնուս  
մէջ յիշէինք . ինչպէս վարը տեղն 'ի տեղը  
կը խօսինք : — « Բայց քանի որ դեռ փա-



փագնիս չէ յաջողուած (կ'ըսեն) նախ մէ-  
ջերնէս ատելութիւնը վերցնենք. որով փա-  
փագնիս ալ կ'ընայ կատարուիլ : 77

Ահա մէր արդար դատեալ . ահա մեր  
աղօրի հատուածները , որոնք « փոխանակ  
խաղաղութեամբ և զգուշութեամբ (ընդ մեզ  
իրենց) բժշակմունքը միացնելու 77 հիմա ի-  
րենց այլալեչու պարսաւագրքով ու շարա-  
խոս տետրակներով՝ մէկ մէկու բռնութեամբ  
կը քաշեն . քաշեցին , և « Ա. քիսայ Աիլոնաց-  
ւոյն վերարկութիւն սէս տասներկու կտոր ը-  
րին 77 այն կտորներն ալ 'ի ծուէնս ծուէնս  
կը պատասեն Վօլէճցիք , Վաշատացիք և  
նախապաշարեալ Արբայեցիք :

Այս ան լս ալ արդար դատենք , որ ի-  
րենց փափագնին ալ լրօք չի յաջողեցաւ  
ու չի կատարուեցաւ . երբ որ 1820ին ու-  
ղեցին իրենց խաբէութեան առաջին փոր-  
ձըն ընել , Պօլլոյ մէր աղօրի Աատրիար-  
դարանը՝ երկու կողմից միասեղ ժողովք  
ընելով , կամեյան որ ատելութեան կնճի-  
սը վերցնեն . ու սէրը և միարանու ինը  
հաստատելով , երկու կողմէն 'ես միակրօն  
ըլանք , սոյսինէն Աասինակրօն . և ստոր նը-  
շանն ալ ան էր , որ երբ Ասմուղիկոսի ա-  
նունը պատարագի մջ կը յիշուէր , իրենք  
ևս դէմ ելան փափի անունը ևս յիշելու .  
ահա իրենց փոխադարձ սիրոյ գրաւականը :

Ի՞նչ որ Միթիթարեանք Հոյ էին, ու Հայոց կրօնքէն բաժնուած ըլլալով՝ կ'ուզէին վերստին միակրօն ըլլալ, Վափի աւուներ ապա մեր պատարագի մէջ յիշատակելու ինչ տեղի ունէր. կ'երևի որ, չէ՛ թէ ատելութեան կնճիւղ վերցընելու, հապա ազգութիւնը վերցնելու ժողովքի եկած էին, և բերաննին որ սէր կը քարոզէր, հոգիներնին սուր կ'ուզէր ազգութեան արմատը կտրելու. որով կ'ուզէին մէկ նոր հաւատք մը հանել մեր եկեղեցիէն դուրս, Հռովմայ նպատակէն ալ հեռու:

Ըմեն աս բաներով մեր Ղուսաւորչակրօն Պօլսոյ ժողովուրդը խաղալիք ընէ են ետքը՝ զմեզ ևս իրենց խարէութեան աշխց և ատելութեան կնճիւններուն մէջ ձգելու՝ Հրաւէր Միոյ ուղարկեցին ժողովրի ձեռքովը. բաց մէք դիւելով, որ Միթիթարեանք միշտ ու ամեն բանի մէջ երկրերան ու երկրագու են, ու աս ժողովքովն ևս «Միթիթարեանք Հոյն ինչ ինչ միանալոյ միայն հնարքով մը կ'ուզեն մեր ազգութեան հիմը վերստին խախտել, և մէկ հատուած մ'ալ անկէ յափըտակել, չէ՛ թէ չհաւատացինք իրենց հրաւիրանացը, այլ և հրաւեր սիրոյն՝ Հրաւէր Միոյ ճանցանք, ու ենթակայ չեղանք անոնց խտրելայ հրաւիրանաց Միոյն:

Ըս եղաւ պատճառ, որ մեր սիրական

Ժողովուրդը Պօլսոյ վշտացաւ մեղմէ , Երեւելամասն ազգէս . ու ան օրուրնէ մինչև աս օրս՝ մէկ պաղութիւն մը տիրած էր մէջերնիս . բայց մենք որ իսկապէս գիտէինք թէ այն կեղծ միաբանութեան տակն ալ Սըխիթարեանք մթերած թոյն ունին , լուցինք որ ժամանակը մեզի տեղ բարբառի : Ընկա մենք գոհութիւն տանք Լստուծոյ , որ Սիսիթարեանք ալ իրենց կողմէն աս օրուան օրս ան մեր բաղձացած ժամանակը սեպելով , ու իրենց խաբէութիւնը հրապարակաւ յայտնելու վայրկեանը համարելով՝ դարձան մէկ փորձ մ'ալ ընելու համար , աս իրենց հին խաբէութեան որոգայթին երեսը ազգասիրական բառերով ոսկեղօծեցին . և այսպէս այսօր մեր ժողովուրդը ան որոգայթներուն մէջ որսալու համար՝ կըրկին մէկ հրաւեր ևս կարգացին . « Վերցնենք առ քառասուկան զանազան սխիւններն . . . Երան ազգէրը փնտրենք առ միանանք ազգակցութեան սիրով » այսինքն արեւելամասն մեր ժողովուրդը Պօլսոյ մեր ազգայնոց հետ մէկ տեղ միանանք իրենց հետ 'ի Վատինակրօնութիւն . կարծելով որ ազգը իրենց լուսաւորութեան վրայ վստահացած , պիտի հաւատայ թէ ճշմարիտ կը խօսին , ճշմարիտ միակրօնութիւն կ'ուղեն . բայց վճիռը տրուած է . սուտն 'ի հօրէ Սատանայէ է . մեղք իրենց



ալ, որ ատելութեան հին նախապաշարժունքով լցուած, իրենց խաբեբայ հոգին մըտաց լուսաւորութեանը յաղթած ըլլալով, ու յայտնի աշխարհի՝ Վօլէճցիք ալ անոնց աս տեսակ հոգին ատելով, բանը վեր հանեցին, որով մեր ճանաչողութիւնն ալ արդարացաւ մեր հոգեորական եղբարց և ժողովրդոց առջև ՚ի Աոստանդնուպօլիս, ու նոցա առ մեզ վերստին սիրոյ շարունակութեան համար Տոմսէան Որոտնեցի, Վրիգոր և Մովսէս Տաթևացի սուրբերը որ Ակեղեցւոյ սրբոց կարգէն հանուած էին Հրապարակ ժողովքին՝ այժմ վերստին կարգեցան ՚ի թիւս սրբոց:

Վերջապէս Մխիթարեանք մեզի կ'ըսեն, « Բռան աղբիւրը փնորեմէ՛ որ փանանէ . . . փոփոքեմէ՛ և ջանանէ, որ ասեմէ՛ս ալ փոփոքն ըլլանէ՛ և փափին ընդ հակառակն կը գրեն . » [Թե՛ Մխիթարեանք երբեք չ'ընեն, որ Հայտ ասորեանց որ Հերթաւանդ և Հերթորեկոս են . . . [Թե՛ Հայոց հետ հաղորդակցութեան զաննին . . . [Թե՛ Մխիթարեանք Հայոց ժամ քաջող և հաղորդակցութեան ընող Ամենակի՛ Բանանայեց յանդիմանութեան Բնութիւն գրեցին . . . [Թե՛ Մխիթարեանք Վարդապետ ին Հնդկաստան քունաստ՛ արեմ՝ ազգային Հերթաւանդաց հետ ընդանութեան զաննէր . [Թե՛ Սերսէս Մխիթարեան Վարդապետին Արմէր վանք Հայոց հետ յԱրտաւանդային հաղորդութիւն ասոր է



. . . թիւ Միջնարեանս զիւ երկար շոյսց հետ  
 մեռաք . . . թիւ սասար է Իւնչիճեանին զբոյ՝  
 շոյսց հետ մորթմանիսն անեւալուսն և երկու  
 հարազատար շոյ բլլալուսն հարձիւր . . . թիւ  
 ոչ ոք է՛րդոսնի, որ Միջնարեանս է շոյսնիւն  
 հա՛նու ևն . . . թիւ Բահմանիսն Մարտիոս ,  
 Միջնարեանս ինչ հերետիկոս ուլ էն ձե՛ հելէ հայ  
 զիւ եղեր . . . թիւ Միջնարեանս ինչ ցանկան  
 շոյսնի, շոյսն և շոյսնիսն էիեղեցոյ  
 որքէ բլլալ (Օարհուրելի խարէ . թիւն . հելէ  
 հայ զիւ եղեր, ու շոյկայ որդի կ'ըսեն) թիւ սասար  
 է որ Միջնարեանս էիեղեց հայսնիսնիւնը արդա  
 բայելիւսն համար, շոյսն Պարիսիսնիսն դասանս  
 ինչն ինչ ուղեր էն . . . թիւ ըստ Վարդապետի Միջն  
 արեանս ճամբան շերտման և շերտիկոս շոյ  
 սոյ դարձը շար կը դերացնէ . . . թիւ Միջն  
 արեանս էրդոսն է՛րդեն, որ շոյսն սասարուսն օրս  
 շերտման և հերետիկոս էն, իե հրաման զի հոյ  
 աննից էիեղեցին երկուսն, և աննից հետ յիսոս  
 սոսմանիսն հարդոսնիսն ընել . . . թիւ ինչ  
 ուսն Ղոստանարայ որդի էն իրձեւուլ, անանի ուլ ուլ  
 Բոս շոյսն որդի էն, ալիբեռնին ինչ սիբեն .  
 ( շոյսն ալիբ կը սիրեն, բայց շոյսն ալիբ  
 շերտման և շերտիկոս է կ'ըսեն ) .  
 թիւ Միջնարեանս հիւ միլը շոյսն էիեղեցին  
 զիւն . . . :

46 Ըստ ամեն խօսքերը Միջնարեանս  
 Կրքոյ Տրատարակելէն Ետքը՝ Ինչ պիտի

Քանաչևեք զիրենք . Հոռվմայ առջև զմեզ  
ուրայած ժամանակին՝ զփափը խարող , մեր  
աղբի առջև իրենց վրայ խօսած առննին՝  
զմեզ խարող : Լ՛հա՛ Լ՛ոյեան Լ՛զանայ ասա-  
ծըն ալ « Լ՛առջ ևայերը էք իւրեկն , ևինա Պա-  
ռը էք իւրեկն , ո՛ր էողն Երանան իւրեկնայ պիտի  
ճանչցո-ին 30 թիւ :

Մենք ալ աւելցընենք . Լթէ աղափի  
խարերայու Երկայրարան հողի ունին Սը-  
խիթարեանք՝ Լ՛ուտերէն ինչ բանով վար  
կը մեան : Լթէ « Սորդ Լ՛ուտերի մի և նոյն  
ժամանակի դրած խարերը իրարու հետ հա-  
մեմտած առնն՝ չի դիտեր ինչ ըսելիք ըր  
(՛ի վարս նորա աղբր . եր . 33) , ապա Սը-  
խիթարեանց Երկուան և աօրուան խօս-  
քերը իրարու հետ համեմտած առնն՝ մարդ  
ինչ սխալի գիտնայ ըսել . երկ՝ աղբիւրը  
կը փնտոէին և կը միանային , այսօր « Սը-  
խիթարեանք հայոց հետ չեն միանար » : —  
Լ՛ս ետքի խօսքերը յայտնի կը ցուցընեն .  
որ առջինները անկեղծութեամբ չէին ըսեր ,  
և հակադարձ՝ առջիններովը զմեզ կը խա-  
րէին , ետքիններովը ալ փափը խարեցին :  
Լ՛սկէ ետքը ինչ կ՛ուրեն՝ բլան , ինչ կ՛ու-  
ղեն՝ ըսեն , այլ ևս իրենց խարուող չկայ :  
Չեն ու չեն արժանի այսուհետև ընդ մեզ  
միութեան . վասն զի անիծիւք և դառնու-  
թեամբ և նենգութեամբ լի են բերանք նո-

ցա, և ՚ի լեզուի նոցա ցաւք և վաստակք : և բանք բերանոյ նոցա անօրէնութիւն և նենգութիւն են :

Վերջապէս Սրբապան Քահանայապետ խօսքին պատասխանին ևս տալով, կնքենք խօսքելնիս բազում դառնութեամբ սրտի թէ Սխիթարեանք ի՞նչպէս չը խնայեցին իրենց վաստակոցը, իրենց զրաջան աշխատութեանցը, իրենց ոսկեզօծ գրքերուն, ու նախ իրենց ուսումնական յառաջադիմութեանցը, զորոնք ամենը մէկ տեղ՝ մէկ գրծուծ տեսրակով մը, արհամարհելի փառասիրութիւն մը ձեռքէ ձեռք յափշտակելու համար, դատապարտութեան ու նզովից տակ ձգեցին ամեն ճշմարտասիրաց և ընդհանրապէս Ազգի լրութեանը առջև : Եւ ևս ի՞նչպէս ձեռք առնումք այն գիրքերը, իրենց խաբէութեան գործիքը ու իրենց բռնած ճամբան :

Ձեռք առնունք ու միշտ ձեռք առնունք. ազգերնուս ևս խնդրենք որ ձեռք առնուն և միշտ կարդան (զգուշութեամբ) ու անոնց քօղով ծածկած խաբէութիւննին բանանք աշխարհի առջև ՚ի խայտառակութիւն իւրեանց. և ոչ թէ ժողովուրդը նրզովենք որ անոնց գրքերը չկարդան (ինչպէս իրենք կ'ընեն մերիններուն համար) ու սուրբ գիրքը կապենք անոնց առջև : Ի՞նչ որ

Միև թարեանց խարէութեան ժամը հասաւ ,  
մեր ալ համբերութեան չափը հասաւ :

« Տետրակին 27 թղ երեսին մէջ աս ալ  
ըսած են թէ Միև թարեանք Սրբազան Քահա-  
նայապետ խօսքը Փոփին պահած են , և չայոց  
կախողնիոսին երբեք չեն ըսած կամ տպած , և թէ  
հայերը մօտերս իրենցօք արտելով՝ կախողնիոսին  
Քահանայապետ ընել սխան : »

« Թէ Միև թարեանք Սրբազան Քահա-  
նայապետ խօսքը . . . չայոց կաթուղիկոսին  
չեն ըսած կամ տպած , իրաւ է . վասն զի  
թէ որ ըսէին ալ կամ տպէին , մենք ան-  
գամ չէինք կամենար ու չէինք ուզեր որ մեր  
Սրբազնադոյն կաթուղիկոսը իրենց Փափի  
ածականներովը կոչուի . այլ՝ բաւական ե-  
ղած է ազգիս՝ մեր նախնական արժանայի-  
շատակ չայրապետաց կայսիրոպատակար մա-  
կանունն , որ յատկացած է ընդ հանրապէս  
ազգիս կաթուղիկոսաց , ինչպէս ցոյց կուտայ  
առաւելապէս Շնորհալոյ ընդհանրական  
Թուղթը ,

Իսկ թէ « չայերը մօտ ատեններս իրենցմէ  
արտելով կաթուղիկոսի Սրբազան Քահանա-  
յապետ ըսել սկսան » , այնքան սուտ է , որ-  
քան իրենց վերը գրուած երկկեզու խօսքե-  
րը . այլ մեք հայրս սրբազան Կահանայապետ  
խօսքը միշտ վիճակաւոր արք եպիսկոպոսաց  
սուած ենք , մանապէսնդ՝ այս քրիստոնեայ



տէրութեանս ատենը, յորում անն կարգի մարդու յատկական պատուանուն մը տըրուած է: Արեւն թէ Սիսիմարեանք իրաւորչաւն Բանայայտիչը խօսքը Փափին պահած են նէ, յետ կանչեն, որ չըլլայ թէ աս տիտղոսոզը իրենց փափը մեր վիճակաւոր արքեպիսկոպոսաց հաւասարաստիճան ըլլայ, կամ թէ կրկին պատասխանատուութեան տակ մնան աս բանիս համար ալ:

« Իսկ թէ իսպառ չեն ուզիր որ աս բաները մենք գործածենք, մեք հայերս իրր թէ իրենցմէ առած ըլլալով, այսինքն իրենց բառգիրքերէն, յայնժամ մենք ևս հետկ'ուպենք մեր կողմէն իրենց տրուած բաները՝ ազգային օրագրաց մէջ, որ տուած ենք իրենց ուխտին պատուանուն և տիտղոս. յետ կը կանչեմք մանաւանդ ազգայնոյ մը ամբողջ յօդուածի ակնածական բաները որ իրենք տպած են իրենց Դորդ. հար. Նաղմափրէպին մէջ. եր. 372—380. որոնց չափով գուցէ արժանաւորութիւն չթողուցին իրենց վրայ՝ մեր ազգի մօտ:

« Մնաց որ մէկ խօսքին պատասխանն ալ տանք. եր. 89. տետրակին. թէ « Սէն-Իննարեանք Էայոյ հետ Բանայայտիչը որ ըլլան, Լէն-Ֆրանայ Կաթողիկոսութեան և Սթլոյ պարբերգութեան կրնան հասնելու »:

Ըստ վրայ մեծ փարակուսութիւն ու

շինք, և կը խնդրենք որ տարակուսութիւն-  
նիս փարատեն. ինչպէս կ'ըսեն, « թէ որ Մը-  
խիթարեանք Հայոց հետ միաբանելու որ  
ըլլան, Աջմիածնայ կաթողիկոսութեան և  
Պօլսոյ պատրիարքութեան » արգելք ո՞ր  
հոգւով « կրնան հասնելու » . աս հիմակուան  
ըրած խարերայութեան, որով զփափը կը  
խարեն, և թէ նոյն զմեզ յորդորող կեղծ  
աշխատիւթեան հոգւովը, որով զմեզ կը  
խարէին . վասն զի աս երկու հեղուքն ալ « որ  
կողմը դասնան՝ խարերայ պիտի ճանչցուին »  
և Աջմիածնայ կաթողիկոսութիւնը ու Պօլ-  
սոյ պատրիարքութիւնը խարերայութեան  
ենթակայ չեն ըլլար . ուրեմն իրենք ալ աս  
խօսքը յետ կանչեն :

Իսկ թէ որ կ'ուզեն ադ խօսքերովն ալ  
ուզիչ դատենք, աս ալ ըսենք որ, « թէ  
Մխիթարեանք Հայոց հետ որ միանալու  
ալ ըլլան, հարիւրաւոր դարերէն ետքը ևս,  
Աջմիածնայ կաթողիկոսութեան և Պօլսոյ  
պատրիարքութեան չեն կրնար հասնելու .  
ու չէ թէ իրենց, հապա նաև իրենց յա-  
ջորդներուն և յետագայներուն ևս չի հա-  
ւատացուիր այդ ազգային իրաւանց Աթոռ-  
ները . ինչու որ՝ նոյն իսկ իրենց յաջորդ-  
ներն ու յետագայքն ալ այս օրուան իրենց  
երկսայրի խաբէութիւնը որդի 'ի հօրէ պիտի  
ժառանգեն, թէ և Հայոց հետ միաբանած  
ևս ըլլան : »



Հասաւ : — Ըհա Մխիթարեանց խաբէու-  
թեան հողոյ մէկ պտուղն ալ :

« Չենք ուզեր Մխիթարեանց իրենց  
ժողովրդոց հետ ունեցած պէս պէս վար-  
մունքնսն վրայ խօսիլ , որոնց ականատե-  
տեղած ենք 'ի թերակղզին խորիմոյ . շատ կը  
համարիմք յիշեցընել իրենց , թէ ինչ ինչ  
ատելութիւն , խաբէութիւն չի հանեցին ի-  
րենց վարդապետներէն մէկ քանին 'ի Վը-  
րաստան՝ բուն Լատին վարդապետաց հետ  
փափական իշխանութեամբ վարուելուն հա-  
մար , որոնք բանը այն աստիճան մեծցուցին ,  
մինչև որ Այսսերական տէրութենէն արտա-  
սահման եղան :

« Հիմայ մեզի ըսեն Մխիթարեանք , ա-  
ւ անոնց նման արժանաւորութեամբ պիտի  
կաթուղիկոսութեան և պատրիարդութեան  
հասնին , երբ « Հայոց հետ միաբանելու որ  
ըլլան » ու այսքան իրենց խաբէութիւններն  
վը պիտի հայոց հետ « միակրօն ըլլան ուղ-  
ղութեամբ » երբ որ մէկ փոքր հերձուած  
գոլով մեզմէ , շուովմայ առջև իրենց ազգու-  
թեան արմատը կ'ուրանան ինչ հերեպիկոս ա-  
ւ են ձե , հեյն հայ լեն , ըսելովնին . ապա թէ մի-  
աբանէին Հայոց հետ , ինչ չի պիտի ըսէին և  
ընէին : — Գուցէ երգում կ'ընեն , թէ  
Հայք ասորուան օրս հերձուածող և հերե-  
տիկոս են :



« Ինչպէս վերը ըսինք , մենք իրենց շատ գրուածները չունինք մեր անշոյ հեռաւոթեան համար . չունինք ժողովագոց այս մասին մէջ ներկայ նիւթ եղած առարկայից ճիշդ գաղափարը . այլ որքան ասորուան օրս ազգային լրագիրներէն գաղափար մը առինք , այսքան միայն կրցանք տրամալից սրտիւ աս խօսքերս զրուցել 'Արշեան Աշաւնոյ ՅՍրոբդ թուոյն' Արիթարեանց տետրակէն առնուած հատուածոց դէմ . թողով մեր իրաւունքը և իրենց անիրաւութիւնը ուրիշ ժամանակ յայտնել ազգիս խոհական գլուխներուն :

« Իսկ թէ որ բոլոր իրենց խաբէութիւնները իրենց « տպած ու անտիպ գրուածներէն հանէինք ու աս տեղս դնէինք , ինչ կը նշմարէին իրենք զիրենք . արժանաւորուի կը մնար մի արդեօք . որով կաթողիկոսութեան և պատրիարքութեան « հասնէին երբոր Հայոց հետ միաբանելու որ ըլլան նէ » :

« Թէ որ չի մնար և ոչ մի արժանաւորութիւն՝ այսքան խաբէութեան և նմակայ ըլլալէն ետքը , իրենք մէկզմէկու դէմ գայթակղելի կռիւներ , չարախօսութիւններ , թշնամանքներ , ստութիւններ հանելէն , ամեն անարժան միջոց և եկեղեցականութեան անվայել զէնքերս ձեռուրնին առած՝ կատաղաբար մէկմէկու հետ մաքառելէն ետքը .

մեզմէ ի՞նչ տեսան, կ'աղաչեմք զիրենք որ ըսեն, մեր ազգէն ի՞նչ վիշտ, ի՞նչ իրենց խաբէութեան փոխադարձ մը կրեցին, որ այլքան տարի սիրով մենք իրենց հետ դընալէն ետքը . կարծելով իրենք թէ իրենց դատը փափի առջև իրաւունք կը գանայ, ու Վօլէճցիները կը դատապարտուին՝ յանկարծ մեր ուղղափառ ազգը հերձուածող, հերետիկոս, մալորեալ կը կոչեն . փոխանակ զի իրենց աշխատութիւնները մեր ազգի ձեռընտուութեամբ կը ապուէին, փոխանակ զի՝ մեր ազգապետ Վ. միրաք իրենց արդեամբ և դործով կ'օգնէին . փոխանակ զի՝ իրենց ոսկեղծ գրքերը ազգիս ոսկին կը քալէին . ու իրենց Վալմալուէպները իրենց շահ կը բերէին . ուստի այս ամեն կարեկցութեան ու համազգակցութեան սիրոյ փոխադարձներն էին, որ յանկարծ մէկ րոպէի մէջ հատուցին իրենց վայելուչ՝ անլուր և աստուածընդդէմ բառերով :

« Սրբեմն մենք ևս մխիթարեանց այս ամեն խաբէութեանց առանց սպաճառի մը մեզի դէմ շարժուած ըլլանուն ու աստուածընդդէմ հայհոյութեանց համար, և փոխանակ սիրոյն՝ ընդ մեզ ատելութեանը՝ իրենց ըսածին պէս Վաստայ ընկածը՝ Վաստայ իտղանէ :

Վ Ր Ի Պ Ը Կ Ք

Երեւ	Կող	Երես	Կող
21	25	զմեր համազ-	որ զմեր համ-
		գի որ	ազգի
22	19	առաւելու	յառաւելու
30	19	, ոյ կը կարծես .	, ոյ կը կարծէր ,
31	6	խաւնա՛	խաւնա՛
31	9	'ի բնէ	որ 'ի բնէ





CONTENTS

14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67	68	69	70	71	72	73	74	75	76	77	78	79	80	81	82	83	84	85	86	87	88	89	90	91	92	93	94	95	96	97	98	99	100
----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	-----





3869



